

բոլորն ալ գորսիգացի, ինչպէս որ ետ-  
քը ըսին ինծի:

— Այո, ըսաւ Օրսոյ՝ որուն աչքերը  
փայլատակեր էին այս պատմութեան  
միջոց. քաջութեամբ ետ քաշուեցան և  
արծիւնին հետերնին տարին. բայց կըտ-  
րիճներուն երեքին երկուքը Վիզգորիա  
դաշտին մէջ քուն կ'ըլլան:

— Գիտե՞ս արդեօք ջոկատին հրամա-  
նատար պաշտօնակալին անունը:

— Իմ հայրս էր. այն միջոցին 18դ  
վաշտին մեծագոյն սպայ էր (Major),  
և նոյն օրուան տխուր պատերազմին  
մէջ ցրցուցած արիութեանն համար  
հազարապետ անուանեցաւ:

— Հայրդ. կ'երզնում գլխուս՝ կտրիճ  
զօրական էր: Ո՛ւր էր թէ տեսնայի զին-  
քը. տարակոյս չկայ որ կը ճանչնայի:  
Ո՛րջ է հիմա:

— Ձէ, պատասխանեց երիտասարդը  
թեթև մը գոյնը նետելով:

— Վազերըլու գտնուեցա՞ւ:

— Այո, բայց պատերազմի դաշտին  
վրայ մեռնելու բազըր չունեցաւ... Գոր-  
սիգայի մէջ մեռաւ երկու տարի ա-  
ռաջ... Ո՛հ, ինչ ազուր է աս ծովը.  
տասը տարիէ ՚ի վեր Միջերկրականը  
չեմ տեսած: — Միջերկրականն Ովկիա-  
նոսէն աւելի գեղեցիկ չե՛րևար աչքիդ,  
ազնիւ օրիորդ:

— Շատ կապոյտ է, ըսաւ Վիզգիա...  
և ալիքը վեհութիւն չունին:

— Վայրենի գեղեցկութիւն կը սիրես  
կարծեմ. անանկ է նէ Գորսիգայի պի-  
տի հաւնիս:

— Աղջիկս ամէն սովորականէ զուրս  
բան կը սիրէ, զրուցեց հազարապետը.  
անոր համար իտալիա անախորժ երև-  
ցաւ իրեն:

— Ես իտալիոյ մէջ Բիզա քաղաքը  
միայն կը ճանչնամ, ըսաւ Օրսոյ, ուր  
քիչ մը ատեն դպրոց գացի. բայց զար-  
մացած եմ գերեզմանատեղոյն (Գաւն-  
թոյ-Մակոյոյ), մայր եկեղեցոյն, ծուռ  
զանգակատանը, բայց մանաւանդ գե-  
րեզմանատեղոյն վրայ. անտարակոյս  
կը յիշէք Օրկանեա պատկերահանին  
Մահուան նկարը. անանկ միտքս մնա-

ցած է ինչուան հիմա, որ կրնամ ծրա-  
զրել տեղն ՚ի տեղը:

Վիզգիա վախնալով որ երիտասարդն  
իտալիոյ վրայ գովեստները կ'երկնցընէ,

— Շատ ազուր է, ըսաւ յօրանջե-  
լով: — Ետքը թողութիւն կ'ընես, հայր,  
գլուխս քիչ մը կը ցաւի, վար պիտի  
իջնամ:

Հօրը ճակատը պազաւ, գլխով բա-  
րեւ տուաւ Օրսոյի և վար իջաւ: Ան ա-  
տեն հազարապետն և Օրսոյ որսորդու-  
թեան և պատերազմի վրայ խօսեցան:  
Իրարու խօսքերէն իմացան որ Վազեր-  
լուի մէջ իրարու դիմաց են եղեր, և  
թէ անշուշտ շատ մը գնտակներ իրա-  
րու պարպած են. ասով սկսան իրարու  
հետ կապուիլ: Նաբոլէոնի, Ուէլլինկը-  
նի և Պիլիսերի վրայ պարսաւներ գը-  
տան. ետքը մէկտեղ այժեամն, կինճ  
ու վայրի ոչխար որսացին: Երբոր գիշե-  
րը շատ առաջ գնաց և պոյսոյի վեր-  
ջին շիշը պարպուեցաւ, հազարապետը  
նորէն տեղակալին ձեռքը սխմեց և բա-  
րի գիշեր մաղթեց. ետքը իրարմէ բաժ-  
նուեցան և պառկելու դացին:

### ՄԼԻԻՄԼ:

Շարունակութիւնը գալ թերթով:

Արդի Եշրոպացի Հայերկնագիտաց  
երկասիրոշքիւնքը:

Աս վերջի տարիներուս եւրոպացի  
հնագէտ ուսումնականաց մեր ազգին  
պատմութեանը, աշխարհագրութեանը,  
լեզուին և այլ յիշատակացը նուիրած  
գրաւոր աշխատութիւնները, և մանա-  
ւանդ հետզհետէ այնպիսի գիտուն և  
նշանաւոր գրիչներու թիւն աւելնալը,  
որ մեզ ազգին վերաբերեալ ծանօթու-  
թիւնները իրենց մտաւորական գոր-  
ծունէութեանը արժանաւոր ճարակ կը  
համարին, յայտնի ապացոյց մըն է, որ  
քաղաքակիրթ Եւրոպան անտարբեր ա-  
չօք չնկատէր աս արևելեան ժողովուր-  
դը, որուն անցեալը կը ցուցընէ արև-

մտեան ձրիւք ճոխացեալ ազգ մը յառաջապահ գունդ կանգնած Ասիոյ դուռը, անոր խորերէն՝ Եւրոպիոյ քաղաքակրթութիւնն ողողանելու սպառնացող վայրենի ժողովրդոց դէմ, և թէ պէտ այն համայնալինջ բռնութեան հարուածոցը տակ ինքն ամենէն առաջ ընկճած երևայ, սակայն պատմութիւնն ինքնին վիպ է, որ այս ափ մը ժողովրդեան դիւցազնական դիմակալութիւնը ոչ սակաւ ժամանակ հզօր թումբ եղաւ բարբարոսութեան ալեաց դէմ և արևմտեան Ասիոյ կողմանէ ուշացուց քաղաքակրթութեան անկումը:

Մեր ազգին թէ խաչակրաց ատեն և թէ անկէ դուրս արևմտեան ժողովրդոց ըրած աչալուրջ ձեռնտուութիւն:

ները, արդի եւրոպացի գրագիտաց 'ի պատմութենէ ծանօթ ըլլալով և մէկալ կողմանէ արևելքի հիմակուան ինկած ազգաց մէջ Հայուն արևմտեան քաղաքակրթութեան գաղափարաց զարմանալի ընդունակութիւնը տեսնալով իրաւամբ մեր ազգին վրայ սէր ու համարում սկսան ցուցնել. անոր համար մենք ալ մեզի երախտագիտութեան պարտք կը սեպենք այսպիսի հայասէր օտարաց անուններն ու իրենց հայախօս երկասիրութիւնները մեր ազգայնոց մէջ ալ հռչակել: Աս անգամուս կը դընենք 1861-1862 տարւոյն մէջ մեր ազգին վրայօք ելած գրութեանց ցուցակ մը, որչափ որ մեր ծանօթութեանը հասած է:

Պ. ՊՐՈՍԷ

Ա. Անուոյ տեղագրութեանը նկատմամբ Ալիշանեան Հ. Ղևոնդ վարդապետին Մեծ Հայոց Տեղագրութեան քանի մը կտորներուն քննադատութիւնը: (Ասիական խմբագրութիւնք քաղեալ Բեդրպուրկի գիտութեանց կայսերական ճեմարանին Յիշատակատետրէն. Հատ. Դ. էջ 255-269):

Բ. Քննադատական վերլուծութիւն ընդհանուր պատմութեան վարդանայ: Առաջին տպագրութիւն հայկական բընագրին ու ռուսերէն թարգմանութիւն 'ի Պ. Ն. Էմինեանէ: (Ի Յիշատակագիրս կայսերական ճեմարանին գիտութեանց Բեդրպուրկի. Պրակ Է. Հատոր Դ. Թիւ 9. Ընթերցեալ 7 մարտ. 1862):

Պ. ՏԻԼԼՈՐԻԷ (ԵԴՈՒԱՐԴ).

Գ. Խաչակրաց ժամանակ փոքր Հայոց թագաւորութեան քաղաքական, կրօնական ու տեսչական կազմութեանը վրայ հետաքննութիւնք: Բարիդ. կայսերական Տպարան. 1862. (Քաղուածոյ Թիւ 3. Ասիական Օրագրէն 1861 տարւոյ):

MR. BROSSET.

1. Examen critique de quelques passages de la Description de la Grande-Arménie du P. Léon Alishan, relatifs à la topographie d'Ani. (Mélanges Asiatiques du Bulletin de l'Académie Impériale des Sciences de S.-Petersbourg. Tome IV. page 255-269)

2. Analyse critique de la *Всеобщая исторія* de Vardan. Édition princeps du texte arménien et traduction russe, par M. N. Emin. (Mémoires de l'Académie Impériale des Sciences de S.-Petersbourg. VII Série. Tome IV, N.º 9. Lu le 7 mars. 1862).

MR. DULAURIER (ÉDOUARD).

3. Études sur l'Organisation politique, religieuse et administrative du royaume de la Petite-Arménie à l'époque des Croisades. Paris. Imprimerie Impériale. 1862. (Extrait N.º 3 de l'année 1861 du Journal asiatique).

Պ. ԼԱՆԿԼՈՒԱ (ՎԻԳՒՈՐ) .

Դ. Թուղթ առ Պ. Պրոսէ, Ռուբինեան հարստութեան ու Լուսինեան ցեղի Հայաստանի թագաւորաց յաջորդութեանը վրայ ըստ արեւելեան և արեւմտեան աղբերաց: (Ասիական Խրմբագրութիւնք քաղեալ Բեղրպուրկի գիտութեանց կայսերական ձեմարանին Յիշատակատետրէն: Հատոր Դ. ընթերցեալ 'ի 4 Սեպտեմբեր 1861):

Ե. Ուղևորութիւն 'ի Կիլիկիա և 'ի Տորոսի լեռները 1852-1853 տարիներուն մէջ, կայսեր հրամանաւր ու Հասարակաց կրթութեան Պաշտօնէին և Արձանագրութեանց ու Բանասիրական Ուսմանց ձեմարանին հովանաւորութեամբ: Բարիզ. 1861. Առ Տիւրքայ:

Զ. Խորհրդածութիւնք Հայաստանի յարաբերութեանց ընդ Գաղղիոյ Միջին դարու մէջ. (Հանդէս Արեւելից, 1861):

Է. Տեղեկագիր առ վսեմափայլ Պաշտօնեայ Հասարակաց կրթութեան Ռուսական և այլն, Դուրինի գիւանացը վրայ. 1861.

Ը. Հետազօտութիւնք Մովսէսի Խորենացւոյն Հայոց Պատմութեան աղբերացը վրայ: (Յիշատակատետր Բեղրպուրկի գիտութեանց կայսերական ձեմարանին. Հատոր Գ. էջ 531-583, 1861):

Թ. Յիշատակագիր ձենովայի Հասարակապետութեան յարաբերութեանցը վրայօք Փոքր Հայոց քրիստոնեայ թագաւորութեանը հետ ԺԳ ու ԺԴ դարերուն մէջ: (Յիշատակագիրք Դուրինի գիտութեանց թագաւորական ձեմարանին: — Պրակ Բ. Հատոր ԺԹ. 1861):

Ժ. Ուղևորութիւն 'ի Կիլիկիա ու Տորոսի լեռները. (Օրագիր, Շրջագայութիւն Աշխարհի. Թիւ 125. Բարիզ. Հաշէղ. 1862):

M<sup>r</sup>. LANGLOIS (VICTOR).

4. Lettre à M<sup>r</sup>. Brosset, sur la succession des rois d'Arménie de la dynastie de Roupèn et de la maison de Lusignan, d'après les sources orientales et occidentales. (Mélanges asiatiques tirés du Bulletin de l'Académie Impériale des Sciences de S.<sup>t</sup>-Pétersbourg. Tome IV. lu le 4 Septembre 1861).

5. Voyage dans la Cilicie et dans les montagnes du Taurus, exécuté pendant les années 1852-1853 par ordre de l'Empereur et sous les auspices du ministre de l'Instruction publique et de l'Académie des Inscriptions et Belles-Lettres. Paris. 1861. Chez Duprat.

6. Considérations sur les rapports de l'Arménie avec la France au moyen-âge (Revue de l'Orient, 1861).

7. Rapport à S. E. M<sup>r</sup>. Rouland ministre de l'Instruction publique etc., sur les Archives de Turin. 1861.

8. Études sur les sources de l'histoire d'Arménie de Moïse de Khorèn. (Bulletin de l'Académie Impériale des Sciences de S.<sup>t</sup>-Pétersbourg. Tome III, page 531-583.) 1861.

9. Mémoire sur les relations de la République de Gènes avec le royaume chrétien de la Petite-Arménie pendant les XIII et XIV siècles. (Memorie della Reale Accademia delle scienze di Torino. Serie II. Tomo XIX. 1861).

10. Voyage dans la Cilicie et dans les montagnes du Taurus. (Journal Le Tour du Monde, N<sup>o</sup>. 125. Paris. Hachette. 1862).

**ԺԱ. Քաղաքացիական ժամանակագրութեան Սմբատայ իշխանին Պապառօնի գունդատապիրն Հայոց, հանդերձ իրեն շարայարողին հատուածովը. թարգմանեալ առաջին անգամ հայկական բնագրէն Բարիզու ու Մուքուայի տպագրութեանց վրայէն: — Բեդրպուրկ. 1862: (Ի Յիշատակագիրս Բեդրպուրկի գիտութեանց կայսերական ճեմարանին. Հատոր Դ. Թիւ 2):**

**Պ. Ա. ՄՈՐՏԻՄԱՆ.**

**ԺԲ. Յաղագս հնոց փոխգական լեզուի. ճառ ընթերցեալ ՚ի ճեմարանի ուսմանց Պաւլերայ ՚ի 4 յունուարի 1862. և տպագրեալ յօրագրի նորին: Հեղինակն կը ջանայ հայերէն բառիք կարգալ ու թարգմանել Փ. Ասիոյ փրուիզացի արձանագիրները:**

**Պ. ԲՈՒԲԲԱԴԻ (ԼՈՐԷՆՑՈ).**

**ԺԳ. Օրհնութիւնք առ Աստուած ամէն դարերու ու ամէն զլիսաւոր հին և արդի ժողովրդոց. — Մասն Հնոց. — Հայկական Երգք: Քասղէլֆրանկոյ, ՚ի տպարանի կայսերանոյ Լոնկոյ. 1862:**

11. Extrait de la Chronique de Sempad, Seigneur de Babaron, Connétable d'Arménie; suivi de celle de son continuateur et traduit pour la première fois de l'arménien, sur les éditions de Moscou et de Paris. — S.<sup>t</sup>-Petersbourg. 1862. (Inséré dans les Mémoires de l'Académie Impériale des Sciences de S.<sup>t</sup>-Petersbourg. Tome IV. N.<sup>o</sup> 6).

**D.<sup>r</sup> A. D. MORDTMANN.**

12. Ueber die altphrygische Sprache.

**D.<sup>r</sup> PUPPATI (LORENZO).**

13. Inni a Dio di tutti i tempi e delle principali nazioni antiche e moderne. — Parte Antica. — Inni Armeni. Castelfranco, dalla Tipografia di Gaetano Longo. 1862.

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆՐ ԴԻՏԵԼԻՔ**

**Յոռցակ Թագաւորաց և իշխանաւորաց Երոսպայ**

Աստեղանիւրն իրենց արտօնէ ընկած քագաւորքն ևն:	Մնաւ	Թագաւորեց
Աղէքսանդր Բ կայսր Ռուսաց	29 ապրիլ 1818	2 մարտ 1855
Աղէքսանդր Դուքս Անհալց-Պեռնպուրկի	2 մարտ 1805	24 մարտ 1834
Ապտիւլ-Ազիզ Խան	9 փետր. 1830	25 յունիս 1861
Ատոլլիս-Գէորգ իշխան Հաւենպուրկ-Լիբբէի	1 օգոստ. 1817	21 նոյեմբ. 1860
Ատոլլիս գուքս Կասսաւի	24 յուլիս 1817	20 օգոստ. 1839
Բեռնարդոս գուքս Սաքս-Մայնինկենի	17 դեկտ. 1800	24 դեկտ. 1803
Բետրոյ Բ կայսր Պրաղիլի	2 դեկտ. 1825	7 ապրիլ 1831
Գէորգ Ե թագաւոր Հանովրի	27 մայիս 1819	18 նոյեմբ. 1851
Գէորգ Ե իշխան Վալտէքի	14 յունուար 1831	15 մայիս 1845
Գուլիելմոս Ա թագաւոր Բրուսիոյ	22 մարտ 1797	3 յունուար 1861
Գուլիելմոս Ա թագաւոր Վերդէմպերկի	27 սեպտեմբ. 1781	30 հոկտ. 1816
Գուլիելմոս Գ թագաւոր Ստորին-Կահանգաց	19 փետր. 1817	17 մարտ 1849
Գուլիելմոս գուքս Պաւնովայի	25 ապրիլ 1806	25 ապրիլ 1831
Եղիսաբէթ Բ թագուհի Սպանիոյ	10 հոկտ. 1830	29 սեպտ. 1833
Էռնէստ Բ գուքս Գոպուրկ-Կոթայի	21 յունիս 1818	29 յունուար 1844
Էռնէստ գուքս Սաքս-Լեյպնպուրկի	16 սեպտ. 1826	3 օգոստ. 1853
Լէոբոլդ Ա թագաւոր Պեյլիոյ	16 դեկտ. 1794	21 յուլիս 1831
Լէոբոլդ-Փրեդերիկոս գուքս Անհալց-Տէսաւ-Գեօթէնի	1 հոկտ. 1793	9 օգոստ. 1817
Լէոբոլդ իշխան Լիբբէ-Տէգմուրի	1 սեպտ. 1821	1 յունուար 1851